

Մրցույթի հայտարարություն

«Արագածոտնի մարզի Քուչակի Մ.Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրենի թափուր տեղը զբաղեցնելու համար»

«Կառավարության 2010 թ. մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության նշանակման» կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն, «Արագածոտնի մարզի Քուչակի, Եղիպատրուշի և Ծաղկաշենի միջնակարգ դպրոցների միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) «Քաղաքացիությունը
- 2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)

2. Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

- 1) Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով
- 2) «Քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը
- 3) Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի պատճենը)
- 4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակով
- 5) Ինքնակենսագրություն

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Քուչակի Մ.Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցում 2021 թ. նոյեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9⁰⁰-ից մինչև 15⁰⁰-ը, բացի հանգստյան (շաբաթ և կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ. դեկտեմբերի 27-ին, ժամը 14⁰⁰-ին «Արագածոտնի մարզի «Քուչակի Մ.Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում:

Հասցեն՝ «Արագածոտնի մարզ, գ. Քուչակ, 11 փողոց, 2.14:

Տեղեկությունների համար դիմել՝ Ն. Եսայանին հեռ. 098832023, էլ. հասցե՝ quchak@schools.am